ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.08.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-03/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.12.2013թ. թիվ 1.1/13.4/18898-13 գրությամբ ներկայացված «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ին (ՀՎՀՀ 00547007) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-03/15 բողոք), «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի 02.12.2013թ. գրությունը, «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի 26.12.2013թ. գրությունը, «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի և «Նորք» տեղեկատվա-վերլուծական կենտրոն ՓԲԸ-ի միջև 15.08.2013թ. կնքված «ՀՊԹՇՀԱՇՁԲ-13/10» ծածկագրով թիվ 12/2 տպագրական աշխատանքների ձեռքբերման պայմանագիրը և 24.10.2013թ. տպագրական աշխատանքների ձեռքբերման «ՀՊԹՇՀԱՇՁԲ-13/10» թիվ 12/2 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիրը և նշված պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը և ՍՑ-ԳԲԽ-03/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 12.08.2015թ. եզրակացությունը պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 06.12.2013թ. թիվ 1.1/13.4/18898-13 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 13.12.2013թ. թիվ 04/032-1949 գրությամբ դիմել է Ընկերությանը:

«Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ն հայտնել է, որ «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի և «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի միջև 15.08.2013թ. կնքված տպագրական աշխատանքների ձեռքբերման «ՀՊԹՇՀԱՇՁԲ-13/10» թիվ 12/2 պայմանագրով (այսուհետ նաև՝ Պայմանագիր) և 24.10.2013թ. կնքված 15.08.2013թ. տպագրական աշխատանքների ձեռքբերման «ՀՊԹՇՀԱՇՁԲ-13/10» թիվ 12/2 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին լրացուցիչ համաձայնագրով Ընկերության կողմից նախատեսված աշխատանքի պատշաճ և ժամանակին չհանձնելու պատճառը Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.2.1 կետի խախտումն է:

Պատվիրատուի կողմից ներկայացվող նյութերը, որի հիման վրա Ընկերությունը պետք է սկսեր աշխատանքները, ժամանակին, որակով և ամբողջական չեն եղել, որը հանդիսացել է Պայմանագրով և Համաձայնագրով Ընկերության կողմից

նախատեսված աշխատանքի պատշաճ և ժամանակին չհանձնելու պատճառը: Պատվիրատուն չի արձագանքել Ընկերության կողմից պարբերաբար ներկայացված աշխատանքներին (ձևավորում), թերությունները հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր չի հայտնել Ընկերությանը՝ դրանք շտկելու համար, ինչի հետևանքով էլ տպագրության աշխատանքները չեն սկսվել:

«Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ն խնդրել է չդիմել կտրուկ միջոցների և չկիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջները, քանի որ հայտ ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում Ընկերությունը ավելի քան մեկ անգամ չի խախտել պայմանագրով նախատեսված պարտավորություն:

3. «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ ֆինանսների նախարարության 06.12.2013թ. թիվ 1.1/13.4/18898-13 գրությանը կից 02.12.2013թ. ներկայացրած գրությամբ «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) հայտնել է, որ «Հայկական տարազ» կատալոգի տպագրության նպատակով հայտարարված «ՀՊԹՇՀԱՇՁԲ-13/10» ծածկագրով ընթացակարգի արդյունքում հաղթող է ճանաչվել «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ն, որի հետ 15.08.2013թ. կնքվել է Պայմանագիր, որով նախատեսված աշխատանքների ավարտը սահմանվել է մինչև 25.10.2013թ.:

Ընկերության մոտ ծագած տեխնիկական խնդիրների պատճառով՝ չունենալով այլընտրանք, Պատվիրատուն ընդառաջել է Ընկերության խնդրանքին և կնքվել է 15.08.2013թ. տպագրական աշխատանքների ձեռքբերման «ՀՊԹՇՀԱՇՁԲ-13/10» թիվ 12/2 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին լրացուցիչ համաձայնագիր:

«Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ նշված ժամկետում Ընկերությունը չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները՝ խախտելով տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքի կատարման

ժամկետը: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետով՝ Պատվիրատուն 02.12.2013թ. միակողմանի լուծել է Պայմանագիրը, ինչի մասին ծանուցել է Ընկերությանը:

Կենտրոնում 02.03.2015թ. ժամը 17:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները ներկայացրել են Պատվիրատուի և Ընկերության միջև 24.10.2013թ. կնքված 15.08.2013թ. տպագրական աշխատանքների ձեռքբերման «ՀՊԹՇՀԱՇՁԲ-13/10» թիվ 12/2 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին լրացուցիչ համաձայնագրի պատճենը:

4. ՍՑ-ԳԲԽ-03/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 12.08.2015թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 06.12.2013թ. թիվ 1.1/13.4/18898-13 գրությամբ «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ին (ՀՎՀՀ 00547007) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

5. ՍՑ-ԳԲԽ-03/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 06.12.2013թ. թիվ 1.1/13.4/18898-13 գրությամբ «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի և «Նորք» տեղեկատվա-վերլուծական կենտրոն ՓԲԸ-ի միջև 15.08.2013թ. կնքվել է «ՀՊԹՇՀԱՇՁԲ-13/10» ծածկագրով թիվ 12/2 տպագրական աշխատանքների ձեռքբերման պայմանագիր:

2. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 և 2 հավելվածներով՝ տեխ-նիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսվել է, որ «Հայկական տարազ» կատալոգը, ըստ հավելվածով սահմանված քանակների, անհրաժեշտ է հանձնել ***մինչև 25.10.2013թ.***:

3. Մինչև «ՀՊԹՇՀԱՇՁԲ-13/10» ծածկագրով պայմանագրով նախատեսված տպագրական աշխատանքների ձեռքբերման համար սահմանված ժամկետը լրանալը (25.10.2013թ.)՝ Ընկերության և Պատվիրատուի միջև 24.10.2013թ. կնքվել է 15.08.2013թ. տպագրական աշխատանքների ձեռքբերման «ՀՊԹՇՀԱՇՁԲ-13/10» թիվ 12/2 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին լրացուցիչ համաձայնագիր (այսուհետ նաև՝ Համաձայնագիր), որի 1.1 կետի համաձայն՝ Պայմանագրի հավելված թիվ 2 կատարվել է փոփոխություն, որի համաձայն՝ «նույն պայմանագրի աշխատանքների գնման ժամկետը գործում է ***մինչև 2013թ. նոյեմբերի 25-ը***»:

4. Պատվիրատուն նկատի ունենալով, որ Ընկերության կողմից խախտվել է 24.10.2013թ. Ընկերության հետ կնքված Համաձայնագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը, 02.12.2013թ. միակողմանի լուծել է Պայմանագիրը՝ Ընկերության կողմից Պայմանագիրն էականորեն խախտելու հիմքով:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-03/15 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում

ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի համար կատարել նույն պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել այդ աշխատանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, «Հայկական տարազ» կատալոգի հանձնման ժամկետ է սահմանվել մինչև 25.10.2013թ:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ն իրավունք ունի միակողմանի լուծել նույն պայմանագիրը, եթե Ընկերությունը էականորեն խախտել է Պայմանագիրը: Ընկերության կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում նույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Ընկերության և Պատվիրատուի միջև 24.10.2013թ. կնքված 15.08.2013թ. տպագրական աշխատանքների ձեռքբերման «ՀՊԹՇՀԱՇՁԲ-13/10» թիվ 12/2 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին լրացուցիչ համաձայնագիր 1.1 կետի համաձայն՝ «նույն պայմանագրի աշխատանքների գնման ժամկետը գործում է 2013թ. օգոստոսի 15-ից մինչև 2013թ. նոյեմբերի 25-ը»:

Այսպիսով, «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ն **մեկ անգամ** խախտել է Պայմանագրով նախատեսված **պարտավորության կատարման ժամկետը**, այն է՝ Պատվիրատուի և Ընկերության միջև 24.10.2013թ. կնքված լրացուցիչ համաձայնագրով աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետում (մինչև 25.11.2013թ.) Պատվիրատուին չի հանձնել «Հայկական տարազ» կատալոգը:

Նման պայմաններում հաշվի առնելով, որ «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ն Պայմանագրով ստանձնած պարտավորությունը խախտել է մեկ

անգամ, Խորհուրդը գտնում է, որ առկա չեն հիմքեր Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 06.12.2013թ. թիվ 1.1/13.4/18898-13 գրությամբ «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ին (ՀՎՀՀ 00547007) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Արման Մնացականյան**

Անդամ՝ **Աննա Մխիթարյան**